## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՆԱՏՈԼԻ ԼՈՒԿՅԱՆՈՎԻՆ՝ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԱՆԱՏՈԼԻ ԼՈՒԿՅԱՆՈՎԻՆ
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

**Մոսկվա, Կրեմլ**

Ուրախությամբ ողջունում ենք Ձեր ընտրությունը իբրև նախագահ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի և մաղթում Ձեզ մշտատև կորով և լավատեսության ոգի, որպեսզի Ձեր բարձր դիրքից Ձեր մեծ նպաստը ի գործ դնեք ի ամրապնդում և ծաղկում Խորհրդային բազմազգ Միության խաղաղության և համերաշխ գործակցության ճանապարհով:

Թույլ տվեք Ձեզ շնորհավորել հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, մաղթելով Ձեզ տոկուն քաջառողջություն և լիակատար հաջողություն Ձեր հայրենանվեր ծրագրերի իրագործման:

Օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
19 Մարտի 1990 թ.